ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 91

ք. Երևան 10 .11.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-2/14» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Գոհար Արամյան» Ա/Ձ-ն (ՀՎՀՀ 30956993; գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 145) (այսուհետ՝ նաև Մասնակից): Հայտերի գնահատման արդյունքում «Գոհար Արամյան» Ա/Ձ-ն գնահատող հանձնաժողովի՝ 04.10.2023թ. որոշմամբ ընթացակարգի, այդ թվում նաև 8-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:
«Գոհար Արամյան» Ա/Ձ-ին՝ armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ և «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-2/14» ծածկագրով ընթացակարգի հրավերի 9.5 կետերի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի և որակավորման ապահովումները, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: «Գոհար Արամյան» Ա/Ձ-ն վերը նշված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով, միաժամանակ 26.10.2023թ. կից գրությամբ հայտնել է, որ հրաժարվում է պայմանագիր կնքել ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով:

Հաշվի առնելով վերոգրյալը «Գոհար Արամյան» Ա/Ձ-ն զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Հաշվի առնելով, որ «Գոհար Արամյան» Ա/Ձ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որի արդյունքում «Գոհար Արամյան» Ա/Ձ-ն զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերության պահանջները, որոշում եմ՝ «Գոհար Արամյան» Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ